



«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ
Երևան 0052, Թբիլիսյան խճ. 11/11
Հեռ.՝ +374 60 500 456, +374 94 546 498
info@aybschool.am
www.aybschool.am

Հայոց պատմության ուսուցիչ

[«Այբ» ավագ դպրոց](#) | Երկարաժամկետ

[Թբիլիսյան խճ. 11/11](#), Երևան, Հայաստան

Դիմումների ընդունման վերջնաժամկետը՝ **հունիսի 10**

Մասնագիտական և անձնային պահանջներ

Մեզ կարող են դիմել **բոլոր այն թեկնածուները**, ովքեր բավարարում են հետևյալ չափանիշներին.

- ունեն **«Պատմություն», «Պատմության ուսուցիչ»** մասնագիտացմամբ մագիստրոսի կամ դրան համարժեք այլ որակավորում,
- ունեն հիմնավոր գիտելիքներ դասավանդվող առարկայից, որը չի սահմանափակվում դասագրքային նյութով,
- տիրապետում են հայոց պատմության հիմնախնդիրների շուրջ գիտական դիսկուրսին և կարող են ուսուցման ընթացքում ապահովել թեմաների բազմատեսանկյուն ուսումնասիրությունը,
- տիրապետում են առաջնային և երկրորդային տարատեսակ աղբյուրների հետ (տեքստային, տեսողական և այլն) աշխատանքի, վերլուծական, քննադատական մտածողության հմտություններին և կարող են համապատասխան ուսումնական գործունեություն կազմակերպել՝ միտված սովորողների մոտ այդ հմտությունների ձևավորմանը և զարգացմանը,
- կարողանում են ստեղծել ուսումնական ռեսուրսներ՝ ուղղված սահմանված նպատակներին և վերջնարդյունքներին,
- տիրապետում են անգլերեն լեզվին և կարող են օգտագործել համապատասխան մասնագիտական և մանկավարժական գրականություն,
- տիրապետում են առարկան դասավանդելու գործնական հմտություններին և արդի տեխնոլոգիաներին,
- ունեն ուսումնական հաստատությունում «Հայոց պատմություն» առարկայի դասավանդման առնվազն **երեք տարվա** փորձ,
- ուսուցչությունը համարում են իրենց կոչումը, իսկ կրթությունը՝ ոչ միայն անձ ձևավորելու, այլ նաև Հայաստանի Հանրապետության ապագան կերտելու գրավական,
- պատրաստակամ են մշտապես կատարելագործելու իրենց մասնագիտական և մանկավարժական կարողությունները՝ հետևելով մասնագիտական և մանկավարժական նորարարություններին ինչպես արտերկրում, այնպես էլ Հայաստանում,

- մանկավարժական գործունեություն իրականացնելիս ցուցաբերում են ստեղծագործական մոտեցում, վերլուծական մտածելակերպ և չեն խուսափում նորարարություններից,
- ունեն խմբի կազմում աշխատելու հմտություններ, համագործակցող են, ունակ են իրենց ներդրումն ունենալ ընդհանուր նպատակին միտված գործունեության մեջ,
- տիրապետում են իրենց աշխատանքի համար անհրաժեշտ համակարգչային ծրագրերին (օր.՝ Microsoft Office և այլն):

Դիմելու կարգ

Բոլոր համապատասխան թեկնածուներին խնդրում ենք vacancy@aybschool.am էլիասցեին ուղարկել ստորև ներկայացված կյութերը՝

1. ինքնակենսագրություն (CV),
2. նամակ-հիմնավորում «Ինչո՞ւ եմ ուզում դառնալ «Այբ»-ում ուսուցիչ» թեմայով (մեկ էջից ոչ ավելի),
3. «Ինչո՞ւ է անհրաժեշտ դպրոցում պատմություն ուսումնասիրել» թեմայի շուրջ շարադրանք (մեկ էջից ոչ ավելի),
4. առարկայական ծրագրի թեմաներից մեկի հիման վրա դասարանի հետ աշխատանքի որևէ մշակում, որը պետք է պարունակի նպատակ և ակնկալվող վերջնարդյունքներ, ինչպես նաև՝ դրանց միտված դասարանային աշխատանքային գործունեության որևէ նմուշ՝ աշխատանքային թերթիկ, առաջադրանք և այլն (նշված ձևաչափերից որևէ մեկով՝ MS Word, Power Point, Adobe PDF, Flash, Video և այլն):

Խնդրում ենք փաստաթղթերը կցել նամակին և նամակի վերնագրում նշել Ձեր անուն-ազգանունը: Կոփտարկվեն դիմումների միայն ամբողջական փաթեթները:

Հայտերն ընդունվում են մինչև 2019 թ. հունիսի 10-ը ներառյալ: Նախնական ընտրություն անցած թեկնածուների հետ ծանոթանալու և մրցույթի հետագա փուլերը (գիտելիքի և հմտությունների ստուգում, փորձնական դաս) կազմակերպելու համար կկապվենք անձամբ՝ փաստաթղթերի ստացմանը զուգընթաց: **Խնդրում ենք չզանգահարել:**

Խնդրում ենք նկատի ունենալ, որ այս կամ այն փուլը չանցած թեկնածուներին դպրոցը հետադարձ կապ չի տրամադրում :

Կազմակերպության մասին

«Այբ» դպրոցը բյուրեղացումն է հայ դպրության լավագույն ավանդույթների և համաշխարհային կրթության բարձրագույն նվաճումների: «Այբ»-ը սովորելու մշակութաստեղծ նոր միջավայր է, ուր ազգային հենքի վրա մշակվում են եզակի կրթական տեխնոլոգիաներ և փորձարկվում ժամանակակից կրթության բարձրագույն ձեռքբերումները՝ ի նպաստ հայկական կրթության մրցունակության բարձրացման:

«Այբ» դպրոցը ծնվել է կրթության դարաշրջանում, անընդհատ և արագորեն վերափոխվող աշխարհում՝ ուսյալ, սեփական ակունքներին հաղորդ և ապագայի պատասխանատվություն

ստանձնող սերունդ ձևավորելու անհրաժեշտությունից: «Այբ»-ը ծնվել է 21-րդ դարում՝ նպատակ ունենալով դառնալ 21-րդ դարի հայկական դպրոցի օրինակելի միջավայր: